22.09.22020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 22 -ի N 1549 - Լ որոշման

# Կ Ա Ր Գ
# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Միջոցառման չափանիշներին բավարարող շահառուները, աջակցությունից օգտվելու նպատակով, մինչև 2020 թվականի հոկտեմբերի 10-ը դիմում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն)՝ լրացնելով էլեկտրոնային հայտը և կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) աջակցության ծրագրի մասնակցության դիմումը.

2) գրավոր համաձայնություն այն մասին, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը բանկերից կամ ԱՔՌԱ վարկային բյուրոյից կարող է ստանալ տեղեկատվություն՝ իրենց վարկային պատմության և վարկերի մարումների վերաբերյալ.

3) բանկի կամ վարկային կազմակերպության գրավոր հաստատումն այն մասին, որ աջակցության շահառու ճանաչվելու դեպքում վարկի մայր գումարի մարումները կհետաձգվեն առնվազն մինչև 2021 թվականի ապրիլ ամիսը.

4) բանկի կամ վարկային կազմակերպության գրավոր հաստատումն այն մասին, որ վարկը տրամադրվել է տրանսպորտային միջոց ձեռք բերելու համար.

5) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից 2020 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ չվճարված տոկոսագումարների վերաբերյալ տեղեկանք՝ չմարված տոկոսները 75 և 25 տոկոս մասերի բաժանելու և դրանց մարման 6–ամսյա ժամանակացույցի տեսքով.

6) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից N 3 հավելվածի համաձայն տրամադրված տեղեկանք՝ 2019 թվականի ընթացքում հայտատուի՝ տվյալ բանկի հաշվեհամարներով դրամական մուտքերի վերաբերյալ.

7) տնտեսավարողի կողմից՝ N 3 հավելվածում նշված տվյալների հիման վրա կազմված տեղեկանք՝ համաձայն N 4 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման/հաշվառման վկայականը (առկայության դեպքում) և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված քաղվածքը, որը կարող է ներբեռնվել էլեկտրոնային եղանակով:

2. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը շահառուների ընտրության նպատակով ստացված տեղեկատվության նախնական համապատասխանության ստուգումն իրականացնում է դիմումը ներկայացնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Թերությունների կամ մերժման հիմքերի առկայության դեպքում դրանց վերաբերյալ հայտատուին տեղեկացումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ նույն ժամկետում:

3. Աջակցության հայտի ստացման ժամկետ է համարվում ամբողջական տեղեկատվության ստացման ամսաթիվը:

4. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը N 2 հավելվածի 1–ին կետում թվարկված փաստաթղթերի փաթեթը հայտատուից ստանալուց և նախնական համապատասխանությունն ուսումնասիրելուց հետո, փաստաթղթերում նշված տեղեկատվությունը ստուգելու նպատակով, երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում է՝

1) ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ)՝ սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակում աջակցության դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետերով պահանջվող պատ-

վիրատուների տնտեսական գործունեության տեսակի և իրացման շրջանառության (համախառն եկամտի) և տնտեսավարողի՝ 2019 թվականի իրացման շրջանառության չափի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Ընդ որում՝ սույն ենթակետի իմաստով՝

ա) պատվիրատուների իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը), տնտեսական գործունեության տեսակը և կշիռը որոշվում են՝ հիմք ընդունելով 2019 թվականի շահութահարկի տարեկան կամ շրջանառության հարկի եռամսյակային հաշվարկներում արտացոլված տվյալները.

բ) տնտեսավարողի իրացման շրջանառության չափը որոշվում է՝ հիմք ընդունելով 2019 թվականի ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով և (կամ) շրջանառության հարկի հաշվարկներով հայտարարագրված իրացման շրջանառությունը.

գ) տնտեսավարողի տնտեսական գործունեության տեսակը և կշիռը որոշվում են՝ հիմք ընդունելով 2019 թվականի շահութահարկի տարեկան կամ շրջանառության հարկի եռամսյակային հաշվարկներում արտացոլված տվյալները.

դ) 2019 թվականի շահութահարկի, շրջանառության հարկի, ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ են համարվում մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը ներառյալ հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկները:

2) ԱՔՌԱ վարկային բյուրո՝ 2019 թվականի ընթացքում հայտատուների 30 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ չունենալու հաստատումը և 2019 թվականի տարեկան վարկային մարումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

5. ՊԵԿ-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիմումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացնում տեղեկատվություն՝ համաձայն NN 5 և 6 հավելվածների:

6. ԱՔՌԱ վարկային բյուրոն ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիմումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է տրամադրում անհրաժեշտ տեղեկատվությունը:

7. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, հավաքագրելով և վերլուծելով ՊԵԿ-ի և ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված տեղեկատվությունը, 4 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին հայտնում է վերջինիս շահառու հանդիսանալու փաստը, կամ չհանդիսանալու դեպքում՝ ներկայացնում է մերժման հիմքերը:

8. Սույն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետով սահմանված դիմումը ստանալու դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում է ՊԵԿ, որը հարկային մարմնի տեղեկատվական բազայում արտացոլված տվյալների (հաշվարկային փաստաթղթերի և աշխատողների) ուսումնասիրության արդյունքում 2 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը գրավոր տեղեկացնում է տնտեսավարողի փաստացի տնտեսական գործունեության տեսակի մասին:

9. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը սույն որոշման N 2 հավելվածի 7-րդ կետով սահմանված կարգով շահառու հանդիսացած տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ ձևավորված վերջնական տեղեկատվությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է ՊԵԿ-ին:

10. Միջոցառման շրջանակում առաջին փոխհատուցումը կատարվում է 2020 թվականի նոյեմբերի 15-ին, իսկ երկրորդը՝ 2021 թվականի փետրվարի 15-ին: Տոկոսադրույքների սուբսիդավորման գործընթացը կարգավորվում է բանկի կամ վարկային կազմակերպության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև կնքվող պայմանագրով:

11. Միջոցառման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը կամ վարկային կազմակերպությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացնում վերջնահաշվարկ՝ տրամադրելով միջոցառմամբ նախատեսված շահառու հանդիսանալու ժամկետներում վարկի համար փաստացի հաշվեգրված տոկոսների վերաբերյալ տեղեկանք: Վերահաշվարկից հետո, եթե օժանդակության արդյունքում առաջանում է դրական տարբերություն (օժանդակության արդյունքում վարկի տոկոսների գծով փաստացի իրականացված վճարման և վարկի տոկոսների գծով շահառուի փաստացի պարտավորության տարբերությունը), վերջինս բանկի կամ վարկային կազմակերպության կողմից վերադարձվում է ՀՀ պետական բյուջե:

12. Միջոցառման շրջանակում վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից փոխանցվում է բանկի կամ վարկային կազմակերպության հաշվին:

13. Միջոցառման շրջանակում օժանդակության գործընթացի մշտադիտարկումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ եռամսյա պարբերականությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ